ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

29 ՄԱՅԻՍԻ
2026 թ.
№ 9 (1164)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԴԱՍԵՐՆ ՈՒ ԱՎԱՐՏԸ

Մայիսի 26-ին Սարդարապատում հաղթելով թուրքական բանակին, հայկական զորքերը կարողացան կասեցնել թուրքական ներխուժումն Անդրկովկաս և փրկել Հայաստանը լիակատար ոչնչացումից: Հայկական հանրապետությունը (Հայաստանի Հանրապետությունը) հռչակվեց «Հայկական ազգային խորհրդի» կողմից 1918 թվականի մայիսի 28-ին Թիֆլիսում՝ Անդրկովկասյան ժողովրդավարական դաշնային հանրապետության փլուզումից հետո: Մայիսի 29-ին Հովհաննես Քաջազնունին նշանակեց անկախ Հայաստանի առաջին վարչապետ:

1918 թվականի մայիսի 28-ին հայ ժողովրդի կողմից անկախ պետականությունը վերականգնելու դարավոր երազանքն ի կատար ածվեց՝ դառնալով հայոց պետականության վերածննդի խորհրդանիշը: Առաջին Հանրապետության պատմական նշանակությունը անգնահատելի է:

Վերջին զանգի ղողանջները մայիսի 22-ին ազդարարեցին ՀՊՄՀ ավագ դպրոց-Հենակետային վարժարանի 154 12-րդ դասարանցիների դպրոցական կյանքի ավարտը: Շրջանավարտները վստահեցրին՝ ուր էլ գնան, հաջողություններ կունենան, բայց այդ ամենի հիմքում վարժարանական «գեղեցիկ, գունեղ և երջանիկ ժամանակահատվածն է լինելու», որ կյանքի նոր փուլում կհաղթահարեն դժվարությունները, նաև խոստացան չշեղվել իրենց նպատակներից:

Մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց շրջանավարտներին և մաղթեց, որ վարժարանում ուսումնառության տարիներին ձեռք բերած ու ձևավորած արժեքները հաստատուն լինեն, ճանապարհ հարթեն նրանց համար և օգնեն՝ կայանալու

որպես մարդ, քաղաքացի և մասնագետ:

Նա շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին՝ հերթական սերունդը դեպի կյանք ճանապարհելու համար, իսկ ծնողներին՝ «համագործակցության, աջակցության, ջերմության ու սիրո համար, որովհետև միայն այդ համագործակցության արդյունքում է հնարավոր կրթել այնպիսի աշակերտներ, որ ունենք այսօր»:

Լիլիթ Մկրտչյանը բարի երթ, խաղաղ երկինք և հաջողություն մաղթեց շրջանավարներին:

Շրջանավարտները մի առանձնահատուկ երախտագիտությամբ բեմ հրավիրեցին ՀՊՄՀ պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանին, որը երկար տարիներ ղեկավարել է վարժարանը, եղել հիմնադրման ու կայացման ակունքներում, որի համար առաքելություն է սերը դեպի կրթությունը և սերունդների հանդեպ նվիրվածությունը:

Նաիրա Սաֆարյանը ծրջանավարտներին մաղթեց, որ կուտակած գիտելիքներով վստահ քայլերով գնան դեպի դեպի երազանքների իրականացում: Պրոռեկտորը վստահ է, որ այս ուսումնական տարվա շրջանավարտներն էլ միանալու են վար-

➤3

ԱՄՓՈՓՎԵՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ -2026-Ը

Մարտին մեկնարկած և շուրջ երկու ամիս տևած «Ուսանողական գարուն» մարզամշակութային ու կրթական ծրագիրն ամփոփվեց Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում: Երկու ամիս «ստեղծագործական էներգիայով, թեժ պայքարով ու անկոտրում կամքով բաբախող համալսարանը» ուսանողներին միավորել էր մեկ գաղափարի շուրջ՝ ապացուցելու, որ «ապագա մանկավարժը ոչ միայն գիտելիքի կրող է, այլև տաղանդի, ուժի և ստեղծագործական անսպառ աղբյուր»:

ՀՊՄՀ ուսանողական խորհուրդը կարողանում է ուսանողներին համախմբել, ոգևորել, գաղափարներ կյանքի կոչել, մղել նոր արարումների... Ամփոփիչ միջոցառումը դրա վկայությունն էր. հաղթածի հպարտությամբ բեմ էին բարձրանում 1-3-րդ տեղերը զբաղեցրած հաղթող ֆակուլտետների ներկայացուցիչները և ուսանողները՝ ստանալու իրենց վաստակած մեդալները՝ երգի, պարի, էսսեի և տարբեր մարզաձևերի մրցույթներում:

«Կրթական ուղղությունը մեր համալսարանի հիմնասյունն է՝ ինտելեկտուալ խաղեր, բանավեճեր, գիտական ու ստեղծագործական մրցույթներ, որոնք ևս մեկ անգամ փաստեցին՝ Մանկավարժականի հզոր զենքը գիտելիքն է ու վերլուծական միտքը»,-ասում է վարողը, ապա ներկայացնում մշակութային ուղղությունը՝ մեր բեմը վերածվել էր արվեստի իսկական հրավառության: Դե, իսկ տարբեր մարզաձևերից մրցումները կոփեցին ուսանողների մարմինն ու թիմային ոգին:

«Այսօր ամփոփում ենք արդյունքները, որը ցույց է տալիս՝ ինչ ճանապարհ կարող է անցնել մարդը, ինչպես կարող է հաջողել և ինչպես ինքն իրեն իր մեջ նայելով՝ շարունակել այդ կետից»,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ նկատելով՝ «կրթության մեջ կարևոր է ինքներս մեզ ուսումնասիրելն ու ճանաչելը»: Նա հավելեց, որ հենց այդպես ուսանողներն իրենց բացահայտել են տարբեր ուղղություններով, շփվել տարբեր ֆակուլտետների ուսանողների հետ, ձևավորել թիմային ոգի ու մտածողություն, միասին հաղթանակի հասնելու ձգտում:

Շախմատի և սպորտի ամբիոնի դասախոս, ԽՍՀՄ սպորտի վարպետ Լիլիթ Գրիգորյանը շնորհավորեց ուսանողներին և որպես մարզաշխարհի մարդ՝ կարևորեց սպորտը՝ ասելով. «Սպորտը մարդուն տալիս է ոչ միայն առողջություն, այլև բնավորություն է ձևավորում, հատկանիշներ, որոնք կյանքում շատ են պետք՝ կամքի մեծ ուժը, հաղթելու և առաջ գնալու ուժը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, թիմային մարզաձևերում ձևավորվող թիմային ոգին...»:

Լիլիթ Գրիգորյանը մաղթեց, որ սպորտը ուսանողների համար դառնա ապրելակերպ:

Ուսանողներին և կազմակերպչական աշխատանքների ամբողջ թիմին շնորհավորեց ու ծրագրի վերջնարդյունքներն ամփոփեց ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը:

Ամփոփումից պարզ դարձավ, որ թիմային ընդհանուր հաշվարկով 3-րդ հորիզոնականը զբաղեցրել է Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետը, 2-րդ հորիզոնականը՝ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետը, իսկ 1-ին պատվավոր տեղը՝ Սկզբնական կրթության ֆակուլտետը:

Միջոցառման հյուրերն էին և հաղթողներին իրենց ուրախ ու ռիթմիկ «Երգի հետքերով» երգով ողջունեցին ՀՊՄՀ հմ. 57 հիմնական դպրոցի փոքրիկները:

Ելույթ ունեցան նաև պարային մրցույթում հաղթած աղջիկները և նորաստեղծ «aspu» բենդը:

Ինը տարի հարազատ դպրոցում

Վերջին զանգի ղողանջները հնչեցին նաև համալսարանական № 57 հիմնական դպրոցում: Դպրոցն այս տարի հրաժեշտ տվեց երեք իններորդ դասարանների շրջանավարտների:

Ահա հարազատ դպրոցի բեմում են 9 «Ա» դասարանի շրջանավարտները՝ երազանքներով ու ժպիտներով լի հայացքներով: Երգ, պար, ասմունք, հույզերի առատություն... Այսպիսին է կյանքի առաջին մեծ փուլի ավարտը: Այստեղ առաջին անգամ ոտք դրեցին դպրոցի շեմից ներս, հաղթահարեցին առաջին դժվարությունները, սիրեցին ուսուցիչներին, ընկերացան դասարանցիների հետ, ինը տարի գիտելիքներ ամբարեցին, ուրախացան ու տխրեցին, հուսահատվեցին ու ոգևորվեցին... Դասվար Կարինե Չիբուխչյանի ու դասղեկ Մերի Բաբայանի հետ բացահայտեցին դպրոցն ու հայրենիքը:

«Կյանքում ոչինչ չի վերջանում: Յուրաքանչյուր վերջ ազդարարում է նորի սկիզբը: Իսկ ամեն նոր բան ենթադրում է հաստատակամություն, վստահություն և հավատ»,- համոզված են իններորդցիները: Հենց այդ հավատով ու վստահությամբ էլ պիտի շարունակեն կրթությունն ավագ դպրոցում, նոր երազանքներ ունենան ու գնան այդ երազանքների հետևից: Իսկ առայժմ սիրո ջերմ ուղերձներ հղեցին ուսուցիչներին, մայրիկներին ու հայրենիքին, երգի ու պարի միջոցով արտահայտեցին այն ամենը, ինչը բառերով չես արտահայտի:

Բեմահարթակը տրամադրվում է մյուս դասարանների շրջանավարտներին:

Հիշում են՝ աշնանային առաջին օրը, երբ վախվորած դպրոց մտան: Իսկ այսօր արդեն հրաժեշտ են տալիս սիրելի դպրոցին: «Կկարոտեմ այն տարիները, որոնք մի ակնթարթի նման աննկատ սահեցին իմ կողքով՝ անցյալում թողնելով անթիվ ու անփոխարինելի հիշողություններ...». ապագայի անորոշությունը մի փոքր վախեցնում է, բայց դպրոցը կմնա նրանց հուշերում՝ ես քեզ սիրելու եմ հենց այնպես, ինչպիսին դու եղել ես ու կաս... Այստեղ սովորեցին հանդուժել, հաղթահարել վախերը, երբեմն խռովել դպրոցից, բայց նորից վերադառնալ նրա՝ իրենց երկրորդ ընտանիքի գիրկը:

Հաջորդ դասարանի աշակերտներն էլ «բացեցին հիշողությունների անտեսանելի ճամպրուկը», մեկ առ մեկ վերապրեցին անցյալի հուշերը և համոզվեցին՝ «յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր խորհուրդ, նույնիսկ ամենախիստ նկատողություն» մեզ համար այսօր դարձել են ուղեցույց, որով առաջ ենք շարժվելու... Իսկ ճամպրուկը լի էր նաև ապագայի երազանքներով, որոնք փորձելու են իրականացնել:

Շրջանավարտներին շնորհավորեցին ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը և դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը:

Լիլիթ Մկրտչյանը շրջանավարտներին շնորհավորեց իններորդ դասարանն ավարտելու կապակցությամբ, վստահեցրեց՝ միասին դեռ ճանապարհ են անցնելու, կյանքի տարբեր շրջափուլեր և հանդիպելու են ավագ դպրոցում ու համալսարանական հարկի ներքո:

Նա շնորհավորեց ուսուցիչներին ու ծնողներին՝ երեխաներին թևեր տալու, գիտելիքի ու հմտության, կյանքի փորձի ու արժեհամակարգի ներդրման համար:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանն ասաց՝ աշակերտներն այսօր ավարտում են իրենց հիմնական դպրոցի իննամյա փուլը: Այսօր մուտք են գործում հաջորդ փուլ՝ մեծերի աշխարհ՝ ավագ դպրոց. «Ես վստահ եմ՝ նրանք կդառնան մեր երկրի արժանապատիվ քաղաքացիները. դրա համար ամեն ինչ արվել է»:

Բարեմաղթանքների, ջերմ ու հուզառատ ելույթների ներքո իններորդցիները մնաս բարով ասացին սիրելի դպրոցին և ուսուցիչներին՝ նրանց հաճախ այցելելու խոստումով՝ սրտերի մեջ պահելով նրանցից ստացած ամենակարևոր դասերը:

Սիլվա Ասրյան

«ԹԱՆԳԱՐԱՆԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ Է՝ ԱՆՑՅԱԼԻ, ՆԵՐԿԱՅԻ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՋԵՎ»

Մայիսի 18-ը Թանգարանների միջազգային օրն է:

Այս տարի ՀՊՄՀ թանգարանում այդ օրը խորհրդանշվեց ձեռագրերի ցուցադրմամբ՝ «Ինչպես են խոսում ձեռագրերը. ձեռագրերը որպես պատմամշակութային աղբյուր» խորագրով:

ԻԿՕՄ-ի այս տարվա կարգախոսն էր՝ «Թանգարանները միավորում են մասնատված աշխարհը»:

«Ինչպե՞ս են խոսում ձեռագրերը. ձեռագրերը որպես պատմամշակութային աղբյուր» ցուցահանդես-միջոցառումը նվիրված է ձեռագրերի տարբեր կիրառություններին, լիովին համապատասխանում է այդ թեմային, քանի որ ձեռագրային ժառանգության բնույթն ինքնին առնչվում է երկխոսության, շարունակականության և մշակութային փոխըմբռնման գաղափարներին,-ասաց ՀՊՄՀ թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը:-Մանկավարժական համալսարանի միջավայրը ուժեղացնում է ցուցահանդեսի միավորող ներուժը: Այստեղ ձեռագրերը կարող են ներկայացվել ոչ միայն որպես մշակութային արժեքներ, այլև որպես ուսուցման և միջմշակութային երկխոսության գործիքներ:

Առաջին հերթին, ձեռագրերը հանդես են գալիս որպես գիտելիքի և հիշողության համամարդկային կրողներ, որոնք անցնում են ժամանակի, լեզուների և սահմանների սահմանափակումներից այն կողմ: Դրանց բազմազան կիրառությունների ներկայացումը՝ կրթության, գիտության, կրոնական կյանքի և առօրյայի մեջ, ցույց է տալիս, որ տարբեր մշակութային և պատմական համատեքստերի պայմաններում մարդկությունը հիմնվում է փորձի և իմաստի փոխանցման համանման ձևերի վրա: Մատենադարանում պահվող և ներկայացվող տարբեր ժողովուրդների և մշակույթների ձեռագրային ժառանգությունը մարդկային քաղաքակրթության միասնականության գիտակցման ապացույցն է»:

«Թանգարանը մեզ համար կարևոր երկխոսության միջավայր է՝ անցյալի, ներկայի և ապագայի միջև,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը: -Թանգարանը շատ կարևոր է մեզ համար՝ մեր ինքնությունը ճանաչելու առումով, որպեսզի կարողանանք ամուր կանգնել ներկայում, և հատկապես նոր գաղափարների և այս երկխոսության միջավայրում հղանալու նոր գաղափարներ՝ ապագայում ավելի հաստատուն քայլերով առաջ շարժվելու համար»:

Լիլիթ Մկրտչյանն ընդգծեց մեր թանգարանի դերը տարբեր տեսանկյուններից՝ կրթական, գիտական ու մշակութային երկխոսության միջավայրի ստեղծումը երկրում ու տարածաշրջանում, ինչպես նաև միջազգային ասպարեզում, հավելելով, որ այս տարի մեր համալսարանը դարձավ թանգարանների միջազգային ասոցիացիայի անդամ:

«Այսօրվա ցուցադրությունը շատ ավելի խորհրդանշական է, որովհետև առանձնահատուկ նշանակություն ենք տվել ձեռագրերին. տեքստը, թուղթը կարևոր իրողություն է՝ սկսած տառի գրելու ձևից. նրա մեջ կա շատ մեծ հոգեբանություն ու մշակույթ»,-ասաց նա՝ հավելելով, որ այս ցուցադրությամբ միաժամանակ փորձում ենք այցելուներին հնարավորություն ընձեռել՝ ծանոթանալու մեր թանգարանի ֆոնդերում պահպանված հարուստ նյութի հետ:

Ցուցադրություն-միջոցառմանը ներկա էր նաև Հայաստանում գործող Մխիթարյան կենտրոնի փոխտեսուչ հայր Գևորգ Սարգսյանը, որը զբաղվում է Կոմիտասի արխիվի վերականգնմամբ ու վերծանմամբ: Նա ուսուցիչներ պատրաստող կրթօջախի անձնակազմին մաղթեց՝ շատ սիրեն և սիրելով կրթեն. «Այս ցուցադրությունը նույնպես սիրո նշան է»,-ասաց նա:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի վարիչ Ամատունի Վիրաբյանը, որ 40 տարի աշխատել է ձեռագրերի հետ, անդրադարձ արեց հին ձեռագրերին՝ պապիրուսի թղթից ու մագաղաթներից մինչև հայկական մանրանկարչություն. «Ամբողջ մարդկության փիլիսոփայությունն ու գրականությունը մեզ հասել են ձեռագիր վիճակում մինչև տպագրության գյուտը»,-ասաց նա:

Բանախոսը հետաքրքիր տեղեկություններ ներկայացրեց տարբեր երկրների արխիվների մասին, որոնցում պահպանվում են շատ հին ձեռագրեր: Մեզանում, ցավոք, արխիվ ստեղծվել է Հայաստանի երկրորդ հանրապետությունում՝ Խորհրդային Հայաստանում, 1923 թվականին: Հազվագյուտ փաստաթղթեր կան, որոնք պահվում են Մատենադարանում և Ազգային արխիվում: Դրանք շատ քիչ են, բայց դրանց մեջ մենք ունենք նշանավոր մարդկանց հնագույն ձեռագրերի մի ամբողջական հավաքածու՝ սկսած Խաչատուր Աբովյանից, Միքայել Նալբանդյանից մինչև կաթողիկոսների ձեռագրերը:

Նա նկատեց՝ 20-րդ դարում գրամեքենան մտավ մարդու կենցաղ, բայց ձեռագիրը դեռ շարունակվում էր, և փաստեց՝ մերօրյա բարձր տեխնոլոգիաների դարում ձեռագրերը դեռևս պահպանում են իրենց յուրահատուկ դերը՝ փոխանցելով հնագույն ժամանակաշրջանների միջավայրը:

Ծրագիրը հագեցած էր ու բազմաբնույթ. տնտեսագիտական գիտությունների թեկնածու, բարերար Հրաչյա Դանիելյանը իր հավաքածուից ներկայացրեց հայ մեծերի ձեռագրեր, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արամ Գրիգորյանը ներկայացրեց ընծայագրերով գրքեր, անցկացվեց վարպետաց դաս՝ «Ձեռագրերը որպես սկզբնաղբյուր», Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ Լիաննա Գևորգյանն ուսանողների համար անցկացրեց սեմինար՝ «Թանգարանային էթիկա և փաստաթղթերի պահպանում» խորագրով, իսկ ՀՊՄՀ պատմության թանգարանի պրակտիկանտ, Վահագն Սեմերջյանը թանգարանում անցկացրեց ներառական էքսկուրսիա տեսողական խնդիրներ ունեցող այցելուների համար:

Միջոցառումն ավարտվեց ֆիլմի դիտումով՝ «Կրթությունը՝ որպես միավորող ուժ. Հայաստանը համաշխարհային կրթության քարտեզում»:

Սիլվա Ասրյան

➢1 ժարանի 30 տարում ձևավորված այն հզոր բանակին, որը պատվով է իրականացնում իր առաքելությունը»:

Պրոռեկտորը մաղթեց, որ շրջանավարտները երկիրը հզորացնեն իրենց աշխատանքով, մտահղացումներով, նորարար գաղափարներով:

2025-2026 ուսումնական տարվա հումանիտար, բնագիտամաթեմատիկական և մշակութային հոսքերի շրջանավարտները ուսուցչական կոլեկտիվի, բուհի ղեկավարության ու ծնողների առաջ իրենց մասնագիտություններին բնորոշ տերմինաբանությամբ «ամփոփեցին» իրենց ստացած գիտելիքներն ու «գաղտնազերծեցին» երազանքներն ու ցանկությունները:

Պատմության ենթահոսքի շրջանավարտները բարձրաձայնեցին՝ այստեղ սովորեցին տարբեր կայսրությունների պատմություններ, բայց հասկացան՝ ամենակարևոր պատմությունը իրենց սեփական կյանքի պատմությունն է, գրեցին սեփական էպոսը, գոյամարտեր մղեցին ու կերտեցին հաղթանակներ, չեղարկեցին աշխարհագրական սահմանները:

Նոր հազարամյակ, նոր սերունդ, որի համար լեզուների իմացությունը խիստ կարևոր է և անհրաժեշտ. իսկ անգլերենը դեպի հեռուն բացված դուռ է, նաև ճանապարհ, որ տանում է դեպի աշխարհը, աշխարհն էլ՝ դեպի քեզ՝ վստահեցրին անգլերենի հոսքի շրջանավարտները:

Իսկ ինչ տվեցին վարժարանական տարիները ապագա հոգեբաններին. նրանք կարող են «վստահորեն բացել կյանքի մի նոր էջ, առաջնորդվել մարդկային հոգեբանությամբ, լինել ապրումակցող և միմյանց օգնող»:

Պարային հոսքի շրջանավարտները գիտակցում են՝ «պարը ծառայում է որպես ժողովրդի հոգևոր ստեղծագործական էներգիայի հավերժական աղբյուր»: Եվ ոչ միայն. «Մեր ուժը մեր համաչափության մեջ է, մեր ազատությունը՝ ռիթմի, իսկ մեր ապագան՝ այն անդադար թռիչքի, որը սկսվեց հենց այս վարժարանից»: Ասվածը հաստատեցին գործով՝ պարահրապարակը գեղեցկացրին՝ խոսելով շարժումների լեզվով ու խրոխտ ռիթմերով:

Կերպարվեստի հոսքի ուսանողները ավարտեցին իրենց կյանքի մի մեծ փուլի կտավը, փուլ, որի ավարտը նրանց համար ընդամենը մի վրձնահարված էր...

Ֆիզիկամաթեմատիկական հոսքի սովորողներն այս տարիների ընթացքում փորձել են հասկանալ սեփական կյանքի ֆունկցիաներն ու բանաձևերը, սովորել են չվախենալ բարդ խնդիրներից՝ գիտակցելով, որ «համբերությունը ամենազորեղ ուժն է, իսկ տրամաբանությունը՝ ամենահուսալի ուղեցույցը»:

Լրագրության հոսքի աշակերտներն էլ այս տարիներին սովորել են «տեսնել մանրամասները, լսել ձայները, տարբերել փաստը կարծիքից ու յուրաքանչյուր պատմության մեջ գտնել ճշմարտություն... քանզի լրագրությունը պարզապես մասնագիտություն չէ. դա աշխարհը տեսնելու կարողություն է»:

Ահա դասերը, որ սովորեցին աշակերտները և այսօր արդեն վստահորեն կարող են թակել կյանքի դռները: Հաջողություն մաղթենք նրանց բոլորին ու երազանքների իրականացում, նաև արձանագրենք՝ բոլոր երազանքներն անցնում են «խաղաղություն» կոչվող հոգեպարար բառի միջով: Բարի՜ երթ, սիրելի շրջանավարտներ, և թող խաղաղության մեջ ծաղկեն ձեր բոլոր նվիրական երազանքները:

Սիլվա Ասրյան

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑՈՒՆ

Բանասիրական ֆակուլտետի և Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի համատեղ նախաձեռնությամբ հերթական գիտաժողովն անցկացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ռուբեն Սևակի թանգարանում: Գիտաժողովը նվիրված էր Վենետիկի Սուրբ Ղազար միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացուն: Հանրապետական գիտաժողովն ամփոփվեց աբբահոր 350-ամյակին նվիրված «Մխիթար Սեբաստացի» հոդվածների ժողովածուի շնորհանդեսով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ռուբեն Սևակի թանգարանում գիտաժողովի անցկացումը յուրահատուկ խորհուրդ ուներ. 16 տարեկանում Մայր Աթոռ է այցելել Մխիթար Սեբաստացին, որը երկար դեգերումներից հետո հաստատվել է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում: Մխիթարյան միաբանության հոգևոր ու գիտակրթական կենտրոնը աշխարհին ներկայացրել է մեր հնամենի ազգի մտածողությունն ու անգնահատելի ժառանգությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, որն ընդգծեց Հայոց ցեղասպանության նահատակ, հանճարեղ բանաստեղծ Ռուբեն Սևակի թանգարանում գիտաժողովն անցկացնելու նվիրական խորհուրդը: Նա խոսեց գիտաժողովի և թեմաների ընտրության նախապատրաստման ջանադիր ընթացքի մասին:

Բանախոսները հանգամանորեն ներկայացրին Մխիթար Սեբաստացու կյանքն ու գործունեությունը, անդրադարձան նրա գործունեության ամենատարբեր շերտերին՝ մանկավարժական դերից մինչև «Աշխարհաբարի քերականություն» ու «Տաղարան», մինչև հայ և արտասահմանյան հայտնի մարդկանց ու գրողների՝ Սեբաստացու և Մխիթարյան միաբանության մասին գնահատականներ ու բնութագրումներ:

«Անսահման երջանիկ եմ, որ այս դահլիճում եմ, որը նվիրված է Ռուբեն Սևակին՝ Ցեղասպանության նահատակներից մեկին, գերազանց բանաստեղծ, որը նաև մեծ հայրենասեր էր: Այս դահլիճում դարեր առաջ եղել է Մխիթար Սեբաստացին, դա նշանակում է՝ սա սրբազան վայր է»,-ասաց ՀՀ ԳԱԱ թղթակից, Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը: Նա ներկայացրեց Մխիթար Սեբաստացու կյանքը՝ որպես «իր ազգին ու քրիստոնեությանը անմնացորդ նվիրված աներևակայելի կամքի ու խիզախության տեր մարդու հրաշքներով լի պատմություն», անդրադարձավ Վենետիկում հայկական հոգևոր միաբանություն հիմնելու նրա ջանքերին: Վերջինս 1740 թվականից արդեն պատրաստել է ընտիր կրթություն ստացած միաբաններ, որոնք առ այսօր շարունակում են իրենց սրբազան գործը:

«Մ. Սեբաստացին և Մխիթարյանները համոզված էին, որ լուսավոր կրթությամբ հայ ազգը կունենա ապագա, և հրատարակում են հին աշխարհի ու միջնադարի նշանավոր այն օտարազգի հեղինակների գործերը, որոնց բնագրերը՝ ստեղծված օտար լեզուներով, կորած են և պահպանվել են միայն դրանց հայերենի թարգմանված օրինակները»,-ներկայացրեց պրոֆեսորը՝ ընդգծելով Եվրոպայում Մխիթարյան միաբանության ունեցած մեծ հեղինակությունն ու աշխարհում հայագիտության զարգացմանը բերած մեծ նպաստը:

Մխիթար Սեբաստացու՝ աշխարհով մեկ բացած դպրոցներն ու տարածած հրատարակչական գրքերը պահել են հայ ժողովրդի ոգին: Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանին ևս իր լուսավորչական գաղափարներով առաջնորդել է Մխիթար Սեբաստացին՝ ամփոփեց բանախոսը («Մ. Սեբաստացու կյանքն ըստ Ստեփանոս Ագոնց Գյուվերի») :

Բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը Մխիթար Սեբաստացուն ներկայացրեց որպես կրոնագետ, հայտնի հոգևորական, լեզվաբան, որը հեղինակն է «Աշխարհաբարի քերականության» առաջին դասագրքի: Պրոֆեսորը ընդգծեց, որ վերջինիս առաջարկած լեզվաբանական ուսմունքի հիման վրա ստեղծվեց նաև վրացերենի դասագիրքը: Ըստ ակադեմիկոս Ջահուկյանի, աշխարհաբարի առաջին դասագիրքը պետք է համարել Մ. Սեբաստացու ձեռնարկը, որովհետև ամբողջական պատկերացում է տալիս և գրաբարյան համակարգի, և աշխարհաբարի հարացույցի առումով, այն բարձրարժեք գիտական աշխատանք է: («Մ. Սեբաստացու Աշխարհաբարի քերականությունը»):

Բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը, որը մի քանի անգամ այցելել է Սուրբ Ղազար կղզում գտնվող միաբանություն, ներկայացրեց գեղարվեստական էսսե՝ 300-ամյակից ավելի սրբացած հողին ոտք դրածի իր զգացողությունների մասին: Ամփոփելով՝ նա ասաց. «Սուրբ Ղազար կղզին հայոց հավատի ու հոգևոր մշակութային ոսկեձույլ մանյակի թանկագին քարն է, կրկնակի արժեքավոր, քանզի հայրենիքից հեռու պահել է ինքնությունը՝ օրինակ դառնալով հայրենի հողի վրա ապրողներիս» («Պատրանքի և իրականության ժամադրավայր Սուրբ Ղազար կղզին»):

Բ.գ.թ., դոցենտ Լիլիթ Հովսեփյանը ներկաների համար բացահայտեց Սեբաստացու «Տաղերը»՝ որպես նրա ամենաանկեղծ խոստովանանքը: «Տաղարանում» զետեղված 24 տաղերի մեծ մասը նվիրված է Մարիամին, որոնք աչքի են ընկնում հյուսվածքի նրբությամբ, պատկերավորությամբ և քնարականությամբ: Տաղերը հիմնականում Մխիթար Սեբաստացու փոթորկահույզ կյանքի դրվագներն են՝ ընդգծեց բանախոսը («Մ. Սեբաստացու «Տաղարանը»):

«Մխիթար Սեբաստացու կյանքը քրիստոնեական կրոնի պատգամներին, լուսավորությանը, իր ազգին անմնացորդ նվիրված հիացմունքի արժանի հայորդու խիզախում է»,-ասաց ամբիոնի դոցենտ Ռուզան Դոլուխանյանը: Նա ներկայացրեց, թե ինչպես էր վերջինս ուսումնատենչ պատանիներին եռանդով սովորեցնում ու առավել մեծ եռանդով զբաղվում է մանկավարժությամբ և պատրաստում իր գործի փոխարինողներ, որոնք այդ լուսավորչական գործը տարածում էին աշխարհում, որտեղ կային հայեր («Մ. Սեբաստացու դերը հայ իրականության մեջ՝ մանկավարժական դիտակետից»):

«Վիկտոր Լանգլուան առաջին օտարերկրացիներից է, որ առանձին գրքով անմահացրեց Մխիթար Սեբաստացուն և նրա հիմնած միաբանությունը, ներկայացրեց դոցենտ Գայանե Մարդյանը:-Ջորջ Բայրոնի նման Լանգլուան էլ հիացած է եղել Սուրբ Ղազար կղզում եղած կարգուկանոնով ու վերջինիս գեղեցկությամբ»:

Վիկտոր Լանգլուան իր գրքում նշում է, որ 1800 թվականին միաբանություն է այցելել Հռոմի 7-րդ պապը, միաժամանակ հանգամանորեն ներկայացնում է հոգևոր միջավայրի առինքնող մանրամասները՝ տպագրած գրքերից մինչև բազմաթիվ այլ արժեքավոր տեղեկություններ: Բանախոսը փաստեց՝ Մխիթարյան ակադեմիան նպաստեց այնպիսի նշանավոր գիտնականների՝ արևելագետների, գրողների կայացմանը, ինչպիսիք են Ռոսսեն, Բայրոնը, Պետերմանը և ուրիշներ:

Վիկտոր Լանգլուան իր կարճատև կյանքում թողեց մեծարժեք հայագիտական ժառանգություն, որից նկատելիորեն բխում է հայերի հանդեպ մեծ սեր և առանձնահատուկ վերաբերմունք («Վիկտոր Լանգլուան Վենետիկի Մխիթարյան միաբանության մասին»):

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Հովհաննես Սարգսյանը Մխիթար Սեբաստացուն ներկայացրեց ըստ Ղևոնդ Ալիշանի («Ղևոնդ Ալիշանը Մ. Սեբաստացու մասին»): Գիտաժողովն ամփոփեց և մերօրյա Մխիթարյան միաբանությունը «գաղտնազերծեց» ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն Մայա Գրիգորյանը («Մխիթարյան միաբանությունն այսօր»):

Գիտաժողովին մասնակցում էին նաև ֆակուլտետի ուսանողները. Արփինե Ստեփանյանը ուսանողների անունից շնորհակալություն հայտնեց դասախոսներին՝ վստահեցնելով, որ նրանց շնորհիվ հայտնվել են մի միջավայրում, որտեղ հարստացրին իրենց գիտելիքները հոգևոր մշակույթի նոր գանձերով:

Գիտաժողովին մասնակցում էր և ելույթ ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների և արխիվի տնօրեն Հայր Ասողիկ Կարապետյանը. «Շնորհակալ ենք, որ այս նվիրական վայրում իրականացրիք այս գիտական ձոնը»,-ասաց նա՝ ընդգծելով՝ անչափ կարևոր է, որ հայ ժողովրդի միասնության գաղափարը սերմանվի գալիք սերունդների մեջ»:

Սիլվա Ասրյան

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

«Դասապրոցես՝ արվեստի միջավայրում, որտեղ կամրջվում է նոր սերնդի կապը Հայաստանում կերպարվեստի զարգացման ակունքներում կանգնած վարպետների հետ».

Արտաշես Քեշիշյան

-Պարոն Քեշիշյան, երբ և ինչո՞ւ ընտրեցիք Մանկավարժական համալսարանը:

-Մանկավարժական համալսարան ես ընդունվել եմ 1976 թվականին, նախընտրել եմ այս բուհը, որովհետև այստեղ դասավանդում էր ակադեմիկոս, քանդակագործ Ղուկաս Չուբարյանը, որի աշակերտն էի ես և տասներեք տարեկանից հաճախում էի նրա արվեստանոց: Եվ որոշեցի նաև նրա ղեկավարությամբ աշխատել բուհի արվեստանոցում:

Հավելեմ, որ 1922 թվականից Մանկավարժականում եմ՝ արդեն 45 տարի:

-Հետադարձ հայացքով ինչպիսի՞ն է Մանկավարժականը Ձեր հիշողություններում: Ովքե՞ր են եղել Ձեր Ուսուցիչները:

-Իմ բախտը շատ է բերել, որովհետև իմ սերնդի մարդիկ բախտ են ունեցել շփվելու Հայաստանի Հանրապետությունում և միջազգային ճանաչում ունեցող այնպիսի արվեստագետների, նկարիչների ու քանդակագործների հետ ինչպեսիք էին ակադեմիկոս Ղուկաս Չուբարյանը, Հովհաննես Զարդարյանը, Տիգրան Սիմոնյանը, Արտաշես Հովսեփյանը, Աշոտ Մելքոնյանը, Ռուբեն Ղևոնդյանը և ուրիշներ: Ես հիշում եմ՝ նրանց հետ դասախոս-ուսանող շփումները վերածվում էին մարդկային պարզ հարաբերությունների: Ավարտելուց անմիջապես հետո ես սկսեցի դասավանդել նաև ինձանից տարիքով մեծ ուսանողների և, պետք է ասել, որ ուսանողական նստարանից աշխատանքի անցումը սահուն եղավ՝ ամենևին խզում չառաջացնելով ուսանող-դասախոս հարաբերություններում: Անվանի մարդկանց հետ շփումներն ինձ շատ օգնեցին՝ իրենց խորհուրդներով, բարյացակամությամբ, որպեսզի ես ստեղծագործական ճիշտ ուղով ընթանամ, իմ աշխատանքները կարողանամ ցուցադրել տարբեր ցուցահանդեսներում:

-Խոսենք Ձեր ցուցահանդեսների մասին. ինչո՞վ է գրավիչ քանդակագործությունը:

-Իմ վարպետ Ղուկաս Չուբարյանն ինձ ասում էր, որ ինձ մոտ գծանկարը շատ լավ է ստացվում, ուրեմն ես կարող եմ քանդակ ստեղծել, հատկապես՝ հարթաքանդակ, որովհետև հարթաքանդակը տարբերվում է տոնային խնդիրների ճիշտ լուծումով, համաչափությամբ և այլն: Այդ իսկ պատճառով իմ ստեղծագործական աշխատանքներում գերակշռում են հարթաքանդակները, որը քանդակի տարատեսակ է, կա նաև բոլորաքանդակ: Սկզբում այն արվում է կավով կամ պլաստիլինով, կաղապարվում է և ձուլվում:

-Փաստորեն Ձեր ստեղծագործական գործունեության արտահայտման միջոցը եղավ հարթաքանդակը:

-Այո, իմ ստեղծագործական գործունեության արտահայտման միջոցը եղավ հարթաքանդակը: Ինչու, որովհետև հարթաքանդակում ես կարող էի ներկայացնել նաև տարածությունը՝ գործող անձինք, ֆիգուրաներ, կոմպոզիցիա և տարածություն՝ ֆոն: Դուք գիտեք, հարթաքանդակը լինում է նաև՝ բարձրաքանդակ և ցածրաքանդակ՝ ռելիեֆ: Բարձրաքանդակն ու հարթաքանդակը հենց նուրբ երանգներով, տոնային խնդիրներ լուծելով ստեղծում ես տարածական պատկեր: Հավելեմ, որ Ղուկաս Չուբարյանն ինձ խրախուսեց, և ես առաջին իսկ տարում՝ 1981 թվականին, մասնակցեցի ԽՍՀՄ համամիութենական ցուցահանդեսին, որտեղ իմ աշխատանքը գնվեց առաջին անգամ: Այն տարիներին ինձ համար դա մեծ գումար էր, ինձ շատ ոգևորեց:

-Ուրիշ որտե՞ղ եք ցուցադրության ներկայացրել Ձեր աշխատանքները:

-Մասնակցել եմ միութենական ու միջազգային, հոբելյանական տարբեր ցուցահանդեսների, իսկ 2015-ին Երևանի Նկարիչների միության սրահում և Աբովյան քաղաքում ունեցա անհատական ցուցահանդես: Իմ կարծիքով՝ անհատական ցուցահանդեսները լուրջ բան են, և մարդը չի կարող շատ հաճախ ներկայանալ անհատական ցուցահանդեսով. դու պետք է մի որոշակի փուլ անցնես, ասելիք ունենաս, որպեսզի ներկայանաս անհատական ցուցահանդեսով:

-Ինչո՞վ են գրավում Ձեր ստեղծագործությունները:

-Հարթաքանդակը բավականին աշխատատար ու նուրբ աշխատանք է, հարթաքանդակը ինտերիերի ձևավորման հարց կարող է լուծել, բավականին բարդ՝ բազմաֆիգուր կոմպոզիցիոն աշխատանք կարող ես կատարել: Դա է ինձ գրավել ստեղծագործական գործընթացում: Վերջերս էլ մի աշխատանք եմ արել, գիպսի մեջ է, հիմա պետք է բրոնզից ձուլեմ:

Արտաշես Քեշիշյան
ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Գծանկարի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, Մ., գ., թ., պրոֆեսոր

-Իս վերնագրեր դնո՞ւմ եք Ձեր աշխատանքներին:

-Այո, օրինակ՝ «Սպասում», «Հատուցում» և այլն: Վերջին շրջանում արված իմ աշխատանքներից մեկը, որ ցուցադրվում է բուհի ցուցասրահում, վերնագրել եմ «Աստվածային կատակերգություն»: Բավականին հետաքրքիր աշխատանք է ստացվել. չեմ հորինել, ինքնին եկել է որպես ստեղծագործական պահ, կոմպոզիցիան մտքիս մեջ մարսվել, փոփոխվել է, հետո էսքիզի մեջ եմ դա արել, մշակել, հետո արդեն նյութի մեջ:Դա ստեղծագործական պրոցես է, երբ մտնում ես դրա մեջ՝ էլ դուրս գալ չկա... Դա կյանք է, հետաքրքիր աշխատանք:

-Կխոսե՞ք ձեր արմատների մասին...

-Իմ հայրը 1923 թվականին՝ վերջին հայրենադարձության ժամանակ, գաղթել է Կոստանդնուպոլսից իր մայրիկի և երկու եղբայրների հետ, պապս զոհվել էր, տատիկս իր երեք զավակների հետ (հայրս նրա մեծն էր), 7 տարեկան էր, երբ գաղթեցին Հայաստան: Տատիկս գրագետ կին է եղել, որ իմացել է ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, հայերեն և Հայաստանում աշխատել է որպես թարգմանչուհի, պապս էլ ոսկերչությամբ է զբաղվել, մեկնել է եվրոպական երկրներ: Հայրս ավարտել է բժշկական և իրավաբանական համալսարաններ, երկար տարիներ աշխատել է որպես բժիշկ:

-Քանդակագործությունը ոչ միայն արվեստ է, այլև արհեստ, այո՞...

-Այո, մենակ քանդակելը չի, դու պետք է իմանաս ու տիրապետես տեխնոլոգիաներին, որ հասցնես վերջնանյութին: Դու պետք է իմանաս այդ նյութի հետ աշխատելու տեխնոլոգիան, որից հետո կաղապարման հարցերը լուծես, առաջին, երկրորդ նյութերը պիտի ստանաս, հետո մոմ պիտի լցնես, այնուհետև՝ ձուլման աշխատանքներն սկսես...

Արվեստ գումարած արհեստ, որտեղ բոլոր դեպքերում գերակշռում է արվեստը:

-Ինչ դասընթացներ եք վարում ուսանողների համար:

-Գծանկար, քանդակ և մարդու պլաստիկ անատոմիա եմ դասավանդում:

-Դուք ստեղծել եք հայերեն բացառիկ գիրք՝ «Մարդու պլաստիկ անատոմիա» վերնագրով: Ինչպե՞ս հղացավ այն ստեղծելու գաղափարը:

-Հրատարակել եմ «Մարդու պլաստիկ անատոմիա» գիրքը, որն իր տեսակի մեջ հանրապետությունում հայերենով միակ գիրքն է: Մենք անցնում էինք պլաստիկ անատոմիա, որը մեզ դասավանդում էր Ալթունյանը, որի հետ գնում էինք անատոմիկ,իսկ հետո այդ առարկան սկսեց դասավանդել Ղուկաս Չուբարյանը, որից էլ անցավ ինձ:

Ինչո՞ւ ես ստեղծեցի այս գիրքը: Հայրս դատական բժիշկ էր, փայլուն գիտեր անատոմիա, հերձումներ էր կատարում: Արձակուրդների ընթացքում ես գնում էի անատոմիկ, մասնակցում էի հայրիկիս դասընթացներին և խնդրում էի ինձ ներկայացնել մարդու ֆիզիոլոգիայի նրբությունները:

Գրքի շնորհանդեսին մասնակցում էին հարգարժան մարդիկ, մասնագետներ, որոնք փաստեցին՝ շատ դժվար է անատոմիան կապել արվեստի հետ: Գրքում ես ներկայացել եմ և՛ որպես արվեստագետ, և՛ որպես անատոմիայի մասնագետ, երկուսը համադրել եմ, ահա ինչու գիրքը կոչվում է ոչ թե մարդու անատոմիա, այլ մարդու պլաստիկ անատոմիա՝ նկարչին վերաբերվող անատոմիա, որտեղ համաչափություններն ու հավասարակշռության պայմաններն են ներկայացված, տարբեր տարիքային խմբերի համաչափությունը: Նկարիչը պետք է հստակ իմանա՝ այս կամ այն շարժումը պատկերելու ժամանակ որ մկանը պետք է ավելի ակտիվ ներկայացնի, որ շարժումը տեսանելի և համոզիչ լինի:

-Ուսանող-դասախոս հարաբերություններում այսօր ի՞նչ առանձնահատկություններ կընդգծեք, ինչքանո՞վ է ուսանողը ակտիվ ուսումնառող:

-Յուրաքանչյուր ուսանողի հանդեպ անհատական մոտեցում պետք է լինի, ամեն մի ուսանող անհատ է, յուրաքանչյուրն իր ընտանեկան միջավայրի մասն է, և պետք է հասկանաս այդ օրը նա ինչ խնդիր ու հոգս ունի, պետք է կարողանաս հասկանալ նրա տվյալ պահի հոգեվիճակը, որպեսզի կարողանաս ներգրավել դասապրոցեսի մեջ և գրավել մասնագիտական գիտելիքներով, որպեսզի վստահեն քեզ:

Մենք շատ լավ շրջանավարտներ ունենք, որոնք, մասնակցում են ցուցահանդեսների, իրենց խմբակներն ունեն, հետադարձ կապը մշտապես կա, տարբեր տարիների շրջանավարտները պարբերաբար այցելում են հարազատ բուհ, երբ մեր խորհրդի կարիքն են ունենում:

- Ինչ կմաղթեք Ձեր ուսանողներին:

-Ես նրանց խորհուրդ կտամ գիտելիքների պաշար վերցնեն որքան հնարավոր է, գնահատականի հետևից չընկնեն: Գնահատականը հարաբերական է, կարևորը գիտելիքն է, որով պետք է կյանք մտնեն, աշխատանք գտնեն:

-Ինչ է համալսարանը Ձեզ համար:

-Սա իմ ընտանիքն է, այստեղ ես ամբողջ օրը շփվում եմ գործընկերներիս հետ, շարունակում իրարից սովորել: Հարազատ միջավայր, որտեղ ամեն անկյունը մեզ հարազատ է: Ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանի հետ միասին փոփոխություններ ենք անում, որի արդյունքում ֆակուլտետում ստեղծվել են արվեստի մշտապես գործող ցուցասրահներ, անվանի մարդկանց անուններով լսարաններ ու սրահ: Ցուցասրահներում ներկայացված են շատ անվանի արվեստագետների գործեր, որովհետև ուսանողները պետք է ճանաչեն մեծ վարպետներին ու նրանց աշխատանքները հենց դասի ընթացքում: Դասապրոցես՝ արվեստի միջավայրում, որտեղ կամրջվում է նոր սերնդի կապը Հայաստանում կերպարվեստի զարգացման ակունքներում կանգնած վարպետների հետ:

Սիլվա Ասրյան

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԵՖԻԼԵ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Մանկավարժական համալսարանում երիտասարդ ստեղծագործողների ստեղծարար մտքի, գեղարվեստական ճաշակի, անհատական մոտեցումների և մասնագիտական կարողությունների ներկայացման յուրօրինակ տոն էր: Կայացավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Հագուստի մոդելավորման բաժնի ուսանողների ավարտական աշխատանքների ցուցադրությունը:

Ավարտական դեֆիլեի շրջանակում մեկ բեմում ներկայացվեցին բակալավրիատի 17 ուսանողի՝ գույների, ձևերի, ժամանակակից լուծումների ու ազգային շեշտադրումների բազմազանությամբ աչքի ընկնող ավելի քան 70 հեղինակային աշխատանքից կազմված հավաքածուներ: «Շարժման հեղափոխություն», «Լիլիթ», «Մախմուր աղջիկ», «Իսպանական շունչ», «Հայ կնոջ ուժը», «Վիշապագորգ», «Տիեզերք», «Հավատք», «Քոչարի». այս և այլ խորագրերով բազմաթեմա հավաքածուներում ապագա մոդելավորողները ներկայացրել էին ուսումնառության տարիներին ձեռք բերած մասնագիտական գիտելիքները, տարբեր գործվածքների և տեխնիկաների հետ աշխատելու հմտությունները, նորաձևության ժամանակակից

միտումներն ազգային և համաշխարհային մշակութային տարրերի հետ համադրելու կարողությունը:

Հավաքածուները ցուցադրվում էին ինչպես հրավիրյալ պրոֆեսիոնալ մոդելների, այնպես էլ՝ առաջին անգամ նորաձևության 6 գործակալությունների սկսնակ մոդելների մասնակցությամբ, ինչը համագործակցության նոր ձևաչափ ու մասնագիտական փորձառություն էր թե՛ ապագա դիզայներների, թե՛ նորաձևության ասպարեզ մուտք գործող մոդելների համար:

Յուրաքանչյուր հավաքածու առանձնանում էր գաղափարական ամբողջականությամբ, ոճային ինքնատիպությամբ և ստեղծագործական համարձակ լուծումներով: Ուսանողները, իրենց ղեկավարների անմիջական աջակցությամբ, անցան իրենց առաջին մասնագիտական ճանապարհը՝ իրականացնելով անդրանիկ ֆոտոշարքերը, ստեղծելով առաջին պորտֆոլիոները:

Ուսանողների աշխատանքները ղեկավարել են դասախոսներ Հռիփսիմե Մարոնյանը, Արամ Նիկոլյանը, Գայանե Եղիազարյանն ու Սոնա Սագրադովան: Նրանց ուղղորդումները, խորհուրդները, դիտարկումները, մասնագիտական աջակցությունն ու փորձը կարևոր դեր են ունեցել հավաքածուների ստեղծման և ավարտին հասցնելու գործընթացում՝ ընդգծելով բուհում ուսանող-դասախոս արդյունավետ և հաջող համագործակցությունը, ինչպես նաև երիտասարդ դիզայներների ստեղծագործական ներուժը, ժամանակակից նորաձևության հանդեպ նրանց նորարար գաղափարները:

Ավարտական ցուցադրության ընթացքում ուսանողների աշխատանքները գնահատում էր մասնագիտական հանձնաժողովը՝ «Ատեքս» նորաձևության կենտրոնի տնօրեն Կարինե Դնոյանի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում էին ՀՀ ժողովրդական նկարիչ Հրանտ Թադևոսյանը, ՀՀ նկարիչների միության քարտուղար Վահագն Գալստյանը, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանն ու Կերպարվեստի ամբիոնի վարիչ Արտաշես Քեշիշյանը:

Ցուցադրությանը ներկա էին բուհի ղեկավար և դասախոսական կազմը, ուսանողներ, նորաձևության ոլորտի մասնագետներ, հյուրեր:

Շնորհավորելով կարևոր օրվա առթիվ՝ ՀՄՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը նշեց՝ ավարտական ցուցադրությունը լի էր ստեղծարարությամբ, երևակայության թռիչքով և մասնագիտական ինքնատիպ լուծումներով: Նրա խոսքով՝ ներկայացված աշխատանքները վկայում են ուսանողների տաղանդի, հետևողական աշխատանքի և ստեղծագործական մտածողության մասին, իսկ մասնագիտական ժյուրիի արձագանքն ու գնահատականները կարևոր խթան կդառնան հետագա զարգացման և նոր հաջողությունների ճանապարհին:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը շրջանավարտներին մաղթեց, որ բուհական ուսումնառության ավարտը դառնա նոր ձեռքբերումների, ստեղծագործական վերելքների և մասնագիտական հաջողությունների սկիզբ: Նա իր երախտագիտությունը հայտնեց դասախոսներին՝ նրանց նվիրված աշխատանքի, փոխանցած գիտելիքի, փորձի և արժեքների համար.«Դուք ոչ միայն կրթում ու սովորեցնում եք, այլև ձևավորում եք նոր սերունդ, նրանց ճանապարհում դեպի կյանք: Մեր պետության ուժն ու հաստատուն ապագան կառուցում են հենց այս երիտասարդները»:

Լիլիթ Մկրտչյանը շնորհակալություն հայտնեց նաև միջոցառման կազմակերպմանն աջակցած և համագործակցած բոլոր կողմերին և շնորհալագրեր հաձնեց ցուցադրությանն աջակից մոդելային ստուդիաների և գործակալությունների ներկայացուցիչներին:

Մարին Աղեկյան

«ՋԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՐԱ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ ՍԵՂԱՆԻ ԳԻՐՔ ԴԱՐՁՆԵԼՆ Է՝ ԻՐ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԵՐԱԶԱՆՔԸ».

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Համազգային» հայ կրթական և մշակութային միության ու Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի համագործակցությամբ պարբերաբար տոնվում են մեծերի հոբելյանները: Այս անգամ առիթը «Զարեհ Խրախունի. 100 բանաստեղծութիւն» ժողովածուն էր, որը նվիրված է մեծանուն գրողի 100-ամյակին:

Մշակութային հանդիպմանը մասնակցում էին ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները, ԵՊՀ դասախոսներ, անվանի գրականագետներ, Զարեհ Խրախունու ընտանիքի անդամները:

«Զարեհ Խրախունին 100 տարեկան է, և և 100 տարին բավական մեծ կենսագրություն է, ստեղծագործական կյանքի բավական մեծ փորձառություն՝ նշանավորելու համար բանաստեղծի վաստակը»,- հանդիսությունը բացեց ՀՊՄՀ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի ղեկավար Քնարիկ Աբրահամյանը՝ նշելով, որ գիրքը ընթերցողին պիտի ամփոփ պատկերացում տա բանաստեղծի կենսագրության, ձևավորման ընթացքի, անցած ճանապարհի և վաստակի վերաբերյալ:

«Զարեհ Խրախունին այն բանաստեղծներից է, որի ստեղծագործությունը պահանջում է կամրջում հայրենիքի ու սփյուռքի հիշողության ու ապագայի, ազգային ոգու և մարդկային խոր ապրումների: Նրա բանաստեղծական խոսքը շարունակում է հուզել, մտածել տալ և նոր սերունդներին փոխանցել հայ մշակույթի արժեքներն ու հոգևոր ուժը»,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը:

Ամբիոնի մոտ է հրավիրվում ՀՊՄՀ Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը, որը դեռ հեռավոր 1990-ական թվականներին գրել է «Զարեհ Խրախունի. բանաստեղծության ազատագրումը» ժողովածուն, որին հետևել են բանաստեղծի ստեղծագործական աշխարհին նվիրված տարբեր ժողովածուներ: Ներկա ժողովածուի կազմողն ու առաջաբանի հեղինակը ևս անվանի պրոֆեսորն է:

«Մարդու կենսագրությունը իր անցյալն է, բայց չմոռանանք նաև ներկան,-ասում էր Զարեհ Խրախունին. պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը ավելացրեց՝ չմոռանանք նաև վաղվա օրը:-«Մենք բոլորս նրա ժամանակակիցն ենք եղել, մենք բոլորս ենք 100 տարեկան, որովհետև բոլորիս մեջ ամուր նստած է Զարեհ Խրախունին»:

Այդ առումով 100 տարվա հեռավորության վրա և ավելի քան առջևում՝ ապագայում ոլորվող մյուս տարիների տիրույթով պրոֆեսորը կրկին ընդգծեց. «Զարեհ Խրախունին մեր ժամանակակիցն է՝ մեզնից շատ ավելի առաջ գրական ճանապարհ բռնած, գրական ուղենիշ հաղթահարած մի բանաստեղծ, որն ապրում է մեր մեջ և ամբողջացնում է մեր ըմբռնումը կյանքի, մահվան ու նաև 100-ամյա գալիք տարիների ուղեգծով»:

Բանախոսն անդրադարձավ բանաստեղծի ու կյանքի, բանաստեղծի ու ժամանակի ներքին հարաբերություններին՝ ասելով, որ Զարեհ Խրախունին իր ժողովածուներով շարունակում է ապրել, նաև իր բազմաբնույթ և խորիմաստ հոդվածներով, նշելով ժամանակի հետ իր կապը հաստատած մի շարք գրքեր՝ «Մշակույթ և արժեք», «Արդիականություն և արվեստ», «Նամակ նորահաս բանաստեղծին», «Կոմիտաս վարդապետ իբր բանաստեղծ»՝ բոլորն էլ գրված 20-րդ դարակեսին:



Պրոֆեսորն ընդգծեց՝ 50-ական թվականների վերջից Զարեհ Խրախունու բանաստեղծությունը բերել է արդեն նոր սերնդի՝ նրան ճանաչելու ներքին պատասխանատվությունը:

«Բանաստեղծությունը գերազանցապես իմացական արվեստն է, մեզ՝ նաև ուսուցիչ՝ և՛ անցյալի ժամանակի ընդգրկումով, և՛ վաղվա օրվա հայացքի մեր սևեռուն մոտեցումով». բանաստեղծության բնութագրման իր ձևակերպումն է տվել բանաստեղծը: Սուրեն Դանիելյանը հավելում է՝ նա զուգակցել է իր խստավարժ, կարգապահ խոսքը զգացումին, նրա ստեղծագործական աշխարհում զգացումի հորդացում կարելի է և չտեսնել, բայց անպայմանորեն կարևորում էր երկխոսությունը իր ընթերցողի ներքին պահանջով, կամ բանաստեղծական պատկերների հոսքը:

Սուրեն Դանիելյանը շարունակում է ներկայացնել, որ նրա բանաստեղծությունները լույս են տեսել Ստամբուլում, Բեյրութում, Փարիզում, Մոնրեալում, Երևանում ու Էջմիածնում: Նա համընդհանուր ճանաչում ուներ, նրա բանաստեղծությունները երկխոսության աշխարհ էին իր համար, իրենից հետո եկողների և ժամանակակիցների համար: Բայց նաև, և առաջին հերթին նրանց համար, ովքեր պիտի գան հետո:

Պրոֆեսորի ներկայացմամբ՝ նրա համար կարևոր ուղղություններ էին պատմությունը և արվեստագետը՝ ժամանակի և տարածության փիլիսոփայական հարաբերությունների մեջ, որը նրան տարել է զգացմունքային ըմռնումից ավելի հեռուն գնացող աշխարհի ոգին բացահայտելու ուղին, թեև գիտեր՝ հուզականությունը իրեն կարող է հեռացնել մարդու հետ երկխոսության ճանապարհից, և հուզականության փոխարեն նա բանաստեղծության ոգին ու արժեքը արժեքը տեսնում էր երկխոսության մեջ:

Բանախոսն անդրադարձավ Խրախունու «Լեռն ի վեր» բանաստեղծությանը, որը բացահայտում էր իրեն. «Ապրելով Պոլսում՝ նա շատ լավ գիտեր իր խոսքի և պայմանականությունը, և՛ ներուժը, այս բանաստեղծական տողերի մեջ իր և իր ժամանակի ամբողջությունն ընդգրկող արժեք կա՝ անսահման երազի, առասպելի միջով գնալ դեպի ապագան, բայց երբեք չմոռանալ ներկա ժամանակները»:

Բանաստեղծը չի գրել Եղեռնի մասին, բայց խորապես զգացել է՝ ներկա ժամանակը ճանաչողության բերումով բերելու է ժամանակի հետ երկխոսելու անհրաժեշտությունը, և այստեղ անզուգական է նրա խաղացած դերը:

Զեկուցման ավարտին պրոֆեսորը անդրադարձավ Խրախունու «Մայրամուտ» բանաստեղծությանը, որտեղ վերջինս փորձել է իմաստավորել կյանքը և տալ անմահության խորհուրդը. հավերժականը մայրամուտն է, բայց մնացողը խոսքն է, խոսքի արժեքը:

Պրոֆեսորը իրավացիորեն նշեց. «Զարեհ Խրախունու ամենաճիշտ ճանապարհը՝ նրա փիլիսոփայությունը, նրա մեծագույն խորհուրդը հասկանալու համար, նրա բանաստեղծական գրքերը սեղանի գիրք դարձնելն է՝ իր մեծագույն երազանքը»:

«Համազգային» հայ կրթական և մշակութային միության Երևանի գրասենյակի տնօրեն Ռուզան Առաքելյանը պատիվ համարեց պոլսահայ մեծ բանաստեղծի հոբելյանի նշումն ու գրքի հրատարակումը՝ ընդգծելով, որ Խրախունին հայ գրականության մեջ հսկայական հետք է թողել, որի մասին դեռ խոսվելու է, և որը իր խոհափիլիսոփայական ստեղծագործություններով ոչ միայն խորհուրդ ու պատգամ է տալիս, այլև սովորեցնում է ճիշտ ապրել, և փոխանցում արժեքներ:

«Նրա ողջ կենսագրությունը մի հետադարձ հայացք էր անցյալին»,-նշեց ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանն ու պատահական չհամարեց, որ գրքի շնորհանդեսը համընկել է Բանասերի միջազգային օրվան. բանասիրությունը հայոց լեզուն և հայ գրականությունն անաղարտ պահելու մի վառ փարոս է: Նա հույս հայտնեց, որ Զարեհ Խրախունու ստեղծագործությունները կընդգրկվեն նաև ավագ դասարանների ծրագրերում՝ ապագա սերնդին կներկայացվի նրա հայրենասիրական կարևոր դասերը:

Ելույթներով հանդես եկան նաև «Համազգային» հայ կրթական և մշակութային միության կենտրոնական վարչության անդամ Արտաշես Շահբազյանը, պոլսահայ և լիբանանահայ բանասեր, մատենագետ Կարո Աբրահամյանը, Պոլսի «Մարմարա» օրաթերթի փոխխմբագիր Նաիրա Մկրտչյան-Սյուզմեն:

Սիլվա Ասրյան

Պարարվեստի ոգին պահպանելու և այն նորովի ներկայացնելու պատասխանատվությամբ

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստի մանկավարժության ամբիոնի տարեվերջյան քննություն-հաշվետու համերգն այս տարի նշանավորվեց ևս մեկ կարևոր իրադարձությամբ՝ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը տեղի ունեցավ գեղեցիկ հոբելյանի՝ ամբիոնի 50-ամյակի համատեքստում: Այդ առիթով բոլոր տարիների շրջանավարտներին, դասախոսներին և ուսանողներին էկրանից շնորհավորեցին ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը և Պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը:

Հանդիսությունը տեղի ունեցավ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Այն վարում էր Սարգիս Նաջարյանը:

Ամբիոնի 50-ամյակի կապակցությամբ շնորհավորական ուղերձում Լիլիթ Մկրտչյանն ընդգծեց. «Կեսդարյա ճանապարհ, որը լի է ստեղծագործ նվիրումով, մասնագիտական ձեռքբերումներով և ազգային մշակույթի պահպանման ու զարգացման կարևոր առաքելությամբ»: Նա կարևորեց ամբիոնի պարուսույցների, մանկավարժների, բեմադրիչների ու արվեստագետների աշխատանքը, որոնք իրենց գործունեությամբ հարստացրել են հայկական մշակույթն ու արժանապատվորեն ներկայացրել աշխարհի տարբեր բեմերում: Լիլիթ Մկրտչյանը վստահեցրեց՝ ամբիոնը ոչ միայն մասնագիտական գիտելիք է փոխանցել, այլև սերունդների մեջ ձևավորել է ազգային արմատների հանդեպ հարգանք, ստեղծագործ մտածողություն և մշակութային պատասխանատվություն:

Շնորհավորելով շրջանավարտներին՝ նա ընդգծեց, որ նրանց է փոխանցվում հայկական պարարվեստի ոգին պահպանելու և այն նորովի ներկայացնելու պատասխանատվությունը, ապա շնորհակալություն հայտնեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին, պարարվեստի բոլոր տարիների նվիրյալներին, որոնք սերունդներ են կրթել:

«Այս 50-ամյա ճանապարհը կերտվել է անմնացորդ նվիրումի, սիրո, մշակութային խիզախումների, ստեղծագործական մտքի և ազգային մշակույթի նկատմամբ ունեցած հավատարմության շնորհիվ,-ասաց ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը: Նա իր երախտագիտությունը հայտնեց բոլոր ժամանակների հրաշալի դասախոսներին, որոնք իրենց գիտելիքն ու սերը նվիրել են ուսանողներին՝ ապահովելով հայկական պարի լուսավոր ճանապարհը:-Այս ճանապարհը, բոլոր խիզախումներով ու դժվարություններով, ունեցել է հաղթանակներ»,-վստահեցրեց պարարվեստի նվիրյալն ու երախտավորը:

Նա շնորհավորեց շրջանավարտներին՝ մաղթելով բարի երթ ու բարի ճանապարհ դեպի պարարվեստի պրոֆեսիոնալ մանկավարժական հրաշք աշխարհ:

Պարային գեղեցիկ կատարումներն ընդմիջվում էին բեմից ու էկրանից ամբիոնի 50-ամյա տարեգրության ներկայացմամբ՝ ըստ մասնագիտացումների ու տարբեր ժանրերի պարերի ուսուցման՝ դասականից մինչև հիպ-հոպ, ազգային-ժողովրդական պարերից մինչև ժամանակակից պարահանդեսային պարեր:

Ամբիոնը ներկայացրեց հինգ սերնդի պատմություն՝ դասախոսների՝ հիացմունքի արժանի նվիրումով, պարուսույց-շրջանա վարտների ստեղծագործական ջանքերով, որի արդյունքում հանրապետության տարբեր մարզերում ու արտերկրում գործում են հրաշալի պարախմբեր՝ մեր ազգային պարի ոգին ու շունչը տարածելով աշխարհով մեկ:

Մանկավարժականում Պարարվեստի մանկավարժության ամբիոնը հիմնադրվել է 1976 թվականին՝ Խորհրդային Հայաստանի ժողովրդական արտիստ Ազատ Ղարիբյանի նախաձեռնությամբ: Ամբիոնի կայացման գործում մեծ ներդրում է ունեցել Խորհրդային Հայաստանի ժողովրդական արտիստ Ֆրունզե Ելանյանը, որը շուրջ քառորդ դար ղեկավարել է ամբիոնը, իսկ 2003 թվականից մինչև այսօր ամբիոնը ղեկավարում է մանկավարժական գիտությունների թեկնածու, հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը:

Ամբիոնի առաջնակարգ բալետմայստերների, պարարվեստի տեսաբանների և ժողովրդական, ժամանակակից ու դասական պարարվեստի վարպետների նվիրյալ ջանքերով ու հետևողական աշխատանքով այսօր կրթվում է պարուսույցների մի նոր սերունդ, որն ապահովում է հայ պարարվեստի զարգացումը:

Պարային ավարտական քննությունը բեմում վերածվեց պարային տոնի ու հրավառության. ներկայացվեց տարբեր ժանրերի ու աշխարհի տարբեր ժողովուրդների պարային բեմադրություններ՝ հիացմունք պատճառելով ծնողներին, դասախոսներին ու հյուրերին:

Հիացմունքի էր արժանի Գոհար Առաքելյանիի ղեկավարած կուրսի տոնական ելույթը, որը կրկին փաստեց՝ պարուսույցների նոր սերունդը հավատարիմ է պարարվեստի մանկավարժության ավանդույթներին և սիրով կրում է հայ պարարվեստի զարգացման առաքելությունը:

Սիլվա Ասրյան

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԻՄ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ PROVE ՆԱԽԱԳԾՈՒՄ

Մայիսի 11-13-ը ես մասնակցեցի Էրազմուս+ PROVE («Արժեքներին միտված կրթության խթանումը Հարավային Կովկասում») նախագծի աշխատաժողովին, որը տեղի ունեցավ Թբիլիսիի Կովկասի համալսարանում:

Աշխատաժողովի ընթացքում մենք քննարկում էինք արժեքների, կրթության և համայնքային զարգացման թեմաներ: Հաճախ հնչում էին իրարից տարբեր կարծիքներ, երբեմն նույնիսկ հակասություններ, որ իրական զարգացման հիմք են հանդիսանում: Երբ տարբեր կարծիքներ բախվում են, մենք ստիպված ենք լինում մտածել, վերանայել մեր դիրքորոշումները և սովորել լսել մյուսներին: Համաձայնությունը միշտ հեշտ է, բայց հենց հակասություններն են, որ մեզ մղում են առաջ գնալ և նոր լուծումներ գտնել:

Հատուկ զգացողություն էր նաև այն, որ աշխատաժողովը անցկացվում էր նախկին Ներսիսյան ճեմարանի շենքում: Որպես հայ՝ ինձ համար կարևոր էր գտնվել այդ պատմական միջավայրում, որտեղ ժամանակին կրթվել են հայ մտավորականներ: Այդ տարածքը կարծես հիշեցնում էր, որ կրթությունը միայն լսարանում ստացած գիտելիքը չէ. այն նաև մշակութային ժառանգություն է, որը մեզ կապում է անցյալի ու ապագայի հետ:

Սա անգլերեն լեզվով իմ առաջին միջազգային ծրագիրն էր: Սկզբում վախենում էի՝ արդյոք կկարողանամ ազատ արտահայտվել: Բայց հենց սկսեցի խոսել, բառերը կարծես ինքնուրույն եկան: Այդ փորձը ինձ սովորեցրեց, որ հաճախ մեզ կանգնեցնում է ոչ թե լեզվի կամ գիտելիքի պակասը, այլ սեփական կասկածները: Երբ հաղթահարում ես վախը, բացվում են նոր հնարավորություններ:

Աշխատաժողովի գործնական փուլում մենք բաժանվեցինք զույգերի: Իմ գործընկերը Երևանի պետական համալսարանից էր, բայց երկուսս էլ Վանաձորից ենք: Այդ պատճառով որոշեցինք կենտրոնանալ Վանաձորի երիտասարդների զբաղվածության և ժամանցի խնդիրների վրա: Չգիտեմ՝ ինչ մեծ կամ փոքր փոփոխություն կստացվի իրականացնել, բայց վստահ եմ, որ հենց այն պահին, երբ երիտասարդը սկսում է հետաքրքրվել իր համայնքի խնդիրներով և հավատում, որ կարող է թեկուզ փոքր ներդրում ունենալ, փոփոխությունն արդեն սկսված է:

Հիմա, երբ մտածում եմ այդ օրերի մասին, ինձ համար ամենակարևոր հարցը մնում է սա. կարո՞ղ է ուսանողը լինել փոփոխության իրական կրող իր համայնքում: Ես հավատում եմ, որ կարող է: Բայց այդ հարցը թողնում եմ նաև ընթերցողին՝ որպես մտորում:

Կարինե Ավալյան

ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՊՐԱԿՏԻԿԱ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողների մասնագիտական պատրաստության կարևորագույն բաղադրիչներից է ուսումնական պրակտիկան, որը տեսական գիտելիքները գործնական հմտությունների վերածելու լավագույն հարթակն է:

2026 թվականի մարտի 23-ից մայիսի 4-ը Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Մաթեմատիկա-ֆիզիկա» բաժնի երրորդ կուրսի ուսանողներս մեր առաջին լուրջ քայլերն արեցինք մանկավարժության ոլորտում՝ պրակտիկան անցկացնելով ՀՊՄՀ հենակետային վարժարանում:

Մեզ համար կրթությունը մշտապես եղել է ոչ միայն գիտելիքի փոխանցում, այլև անհատի ձևավորման հիմք: Վարժարանի ջերմ մթնոլորտը և փորձառու մանկավարժների ուղղորդումը մեզ հնարավորություն տվեցին հասկանալու, որ ժամանակակից ուսուցիչը պետք է լինի ոչ թե պասիվ տեղեկատվություն տվող, այլ սովորողի ուսումնառությունը ոգեշնչող և ուղղորդող:

Պրակտիկայի ընթացքում մենք բախվեցինք բազմաթիվ մասնագիտական մարտահրավերների, հատկապես բնագիտական առարկաների բարդ նյութը աշակերտներին մատչելի ներկայացնելու հարցում: 10-րդ և 11-րդ դասարաններում դասավանդելով այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Ամպերի և Լորենցի ուժերը, հիդրոստատիկ ճնշումը կամ տատանումները, մենք ձգտեցինք կիրառել ինտերակտիվ մեթոդներ՝ «Մտագրոհ», «Մտածիր-զույգ կազմիր-կիսվիր» և ՏՀՏ գործիքներ: Մեր նպատակն էր յուրաքանչյուր թեմա ներկայացնել կիրառական և հետաքրքիր ձևով՝ փորձելով կապ գտնել ֆիզիկական երևույթների և իրական կյանքի միջև:

Պրակտիկայի ամենահիշարժան դրվագներից էր 10-րդ դասարանում կազմակերպված «Ֆիզիկան մեր շուրջը» խորագրով ինտելեկտուալ խաղ-միջոցառումը. «Ինչ, որտեղ, երբ» ձևաչափով անցկացված այս մրցույթը ցույց տվեց, թե որքան մեծ է ֆիզիկայի կապը պատմության, գրականության և առօր-յայի հետ: Սկսած Գալիլեոյի ճակատագրից մինչև «սև արկղի» գաղտնիքները՝ աշակերտները մեծ ոգևորությամբ էին լուծում տրամաբանական խնդիրները՝ ապացուցելով, որ ֆիզիկան ոչ միայն բանաձևեր են, այլև մեզ շրջապատող հրաշքների գիտական բացատրությունը:

Այս վեց շաբաթները մեզ սովորեցրին, որ ուսուցչի աշխատանքը պարզապես մասնագիտություն չէ, այլ առաքելություն: Մենք հասկացանք, որ դասի հաջողությունը կախված է ոչ միայն առարկայական խորը գիտելիքներից, այլև աշակերտի հետ ստեղծված անմիջական կապից և դրական հուզական միջավայրից:

Ամփոփելով պրակտիկայի ընթացքը՝ կարող ենք վստահությամբ ասել, որ այն ամրապնդեց մեր գիտակցական ընտրությունը: Մենք պատրաստ ենք շարունակել մեր ինքնակրթության ուղին, կատարելագործել մեր մանկավարժական հմտությունները և դառնալ 21-րդ դարի պահանջներին համապատասխանող մանկավարժներ, որոնք կկրթեն վաղվա արժանապատիվ քաղաքացուն:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողներ

Մշտական արժեքներին նվիրված դասերը եվ XXXVIII «Վերջին զանգ»-ը «Վերածնունդ» դպրոցում

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի մայիսյան դասերը նվիրված էին համընդհանուր մարդասիրական դարավոր արժեքներին՝ սերմանելով երեխաների մեջ կայուն ընտանիքի, պետության ու պետականության զինանշանը, ՀՀ եռագույնը և Սարդարապատի հուշարձանը:

Հատկանշական է, որ կիրակնօրյա դպրոցը մշտական կապի մեջ է և հաճախակի բաց դասեր է կազմակերպում ոչ միայն աշակերտների, այլև նրանց ծնողների հետ,

գաղափարը: Բաց դասերն անցկացվեցին Երեխաների պաշտպանության, Ծնողների համաշխարհային, Ընտանիքների միջազգային օրվա տոներին ընդառաջ, որոնց գագաթնակետը մայիսի 28-ն էր, երբ 1918 թվականին Հայաստանը հազարամյակներ հետո վերականգնեց իր պետականությունը, որի լուռ վկաներն են ՀՀ հիմնը, ՀՀ եռագույնը հանդես են գալիս թեմատիկ զեկույցներով:

Ամառային արձակուրդներին դպրոցի սաները, որոնք այցելելու են մայր հայրենիք, ծանոթացան դպրոցի ամառային ծրագրին, որն իր մեջ ներառում է այցելություններ թանգարաններ և ցուցահանդեսներ, թատրոններ և համերգներ, գրադարաններ և եկեղեցիներ, հանդիպումներ կրթության և մշակույթի ակնառու դեմքերի հետ: Տարիների փորձը ցույց է տալիս, որ այդ հանդիպումներից հետո նրանք էլ ավելի գիտակցաբար են այցելում հայկական դպրոց, սովորում հայերենը, պատմությունն ու մշակույթը, որը մեզ ամուր կապում է աշխարհի տարբեր անկյուններում ապրող յուրաքանչյուր հայի հետ:

Ընդգծենք, որ ավանդաբար մայիսի վերջին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տեղի ունեցավ XXXVIII «Վերջին զանգ»-ը, որն ամփոփեց 2025-2026 թթ. ուսումնական տարին: Հանդիսավոր միջոցառումը կազմակերպվել էր նախկին Լազարյան ճեմարանի, ներկայիս՝ ՀՀ դեսպանության հանդիսությունների մեծ դահլիճում: Միջոցառման պաշտոնական մասը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության օրհներգով, որից հետո իր ողջույնի խոսքով հանդես եկավ ՌԴ-ում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար, աշխատակազմի ղեկավար Արտակ Գաբրիելյանը, որը փոխանցեց Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եվ լիազոր դեսպան Գուրգեն Արսենյանի ուղերձը: Այնուհետև, ինչպես միշտ, ներկաներին իր շնորհակալական խոսքը հղեց դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանը:

Հանդիսավոր միջոցառումը կազմակերպվել էր դպրոցի ուսուցչական անձնակազմի՝ Շողիկ Փահլևանյանի, Աննա Հովհանյանի, Քնարիկ Վարդանյանի, Արփինե Սամվելյանի, Նանե Մարգարյանի ջանքերով:

Այսպիսով, միահյուսելով կրթության, հայապահպանության ու հայ ընտանիքի գաղափարը՝ «Վերածնունդ» դպրոցը սիրով պատրաստ է իր դռները բացել 2026-2027 թթ. XXXIX ուսումնական տարում:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ